Կանայք և քահանայությունը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է.

Սփոփող Միությանն ուղղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ էր, ասել է. «Չնայած որ քույրերին չի տրվել քահանայություն, այն չի շնորհվել նրանց, դա չի նշանակում, որ Տերը նրանց իշխանություն չի տվել: . . .Եկեղեցու անդամին կամ քրոջը տրված է իշխանություն, որպեսզի Եկեղեցում որոշակի ծառայություններ կատարեն , որոնք պարտադիր և բացարձակապես անհրաժեշտ են մեր փրկության համար, ինչպես օրինակ այն աշխատանքը, որը քույրերն անում են Տիրոջ Տանը: Նրանց տրված է իշխանություն անելու մեծ և հոյակապ գործեր, որոնք սուրբ են Տիրոջ համար և նույնքան պարտադիր են, որքան Քահանայություն կրող տղամարդկանց տրված օրհնությունները» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ *Relief Society Magazine,* Jan. 1959, 4]:

Այդ նշանավոր ելույթի ժամանակ Նախագահ Սմիթը կրկին անգամ նշեց, որ կանանց տրվել է իշխանություն: Նա ասաց կանանց. «Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ավելացրեց, որ Սփոփող Միությանը «տրվել է զորություն և իշխանություն՝ շատ բաներ անելու: Այն աշխատանքը, որ նրանք կատարում են, արվում է աստվածային իշխանությամբ»: Եվ անշուշտ Եկեղեցում կանանց կամ տղամարդկանց կողմից կատարված աշխատանքը, լինի տաճարներում, թե ծխերում կամ ճյուղերում, արվում է քահանայության բանալիներ կրողների առաջնորդության ներքո: Այսպիսով, խոսելով Սփոփող Միության մասին, Նախագահ Սմիթը բացատրել է. «[Տերը] նրանց է տվել այդ հիանալի կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխերի եպիսկոպոսների ղեկավարության ներքո . . . , հոգ տանելով մեր մարդկանց հոգևոր և ֆիզիկական շահերի մասին» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ 4–5]: . . .

Մենք սովոր չենք կանանց մասին խոսել, որպես Եկեղեցու իրենց կոչումներում քահանայության իշխանություն ունեցողների, սակայն ուրիշ ի՞նչ իշխանություն կարող է լինել: Երբ կինը՝ երիտասարդ, թե ծեր, ձեռնադրվում է քարոզելու ավետարանը՝ որպես լիաժամկետ միսիոներ, նրան տրվում է քահանայության իշխանություն՝ կատարելու քահանայության գործառույթ: Նույնը կարել է ասել, երբ կինը քահանայության բանալիներ կրողի ղեկավարման ներքո ի սպաս է դրվում ծառայելու որպես պաշտոնյա կամ ուսուցիչ Եկեղեցու որևէ կազմակերպությունում: Ցանակացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս գործադրում է քահանայության իշխանությունը» («Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2014, 50–51):

Կանայք և քահանայությունը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է.

Սփոփող Միությանն ուղղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ էր, ասել է. «Չնայած որ քույրերին չի տրվել քահանայություն, այն չի շնորհվել նրանց, դա չի նշանակում, որ Տերը նրանց իշխանություն չի տվել: . . .Եկեղեցու անդամին կամ քրոջը տրված է իշխանություն, որպեսզի Եկեղեցում որոշակի ծառայություններ կատարեն , որոնք պարտադիր և բացարձակապես անհրաժեշտ են մեր փրկության համար, ինչպես օրինակ այն աշխատանքը, որը քույրերն անում են Տիրոջ Տանը: Նրանց տրված է իշխանություն անելու մեծ և հոյակապ գործեր, որոնք սուրբ են Տիրոջ համար և նույնքան պարտադիր են, որքան Քահանայություն կրող տղամարդկանց տրված օրհնությունները» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ *Relief Society Magazine,* Jan. 1959, 4]:

Այդ նշանավոր ելույթի ժամանակ Նախագահ Սմիթը կրկին անգամ նշեց, որ կանանց տրվել է իշխանություն: Նա ասաց կանանց. «Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ավելացրեց, որ Սփոփող Միությանը «տրվել է զորություն և իշխանություն՝ շատ բաներ անելու: Այն աշխատանքը, որ նրանք կատարում են, արվում է աստվածային իշխանությամբ»: Եվ անշուշտ Եկեղեցում կանանց կամ տղամարդկանց կողմից կատարված աշխատանքը, լինի տաճարներում, թե ծխերում կամ ճյուղերում, արվում է քահանայության բանալիներ կրողների առաջնորդության ներքո: Այսպիսով, խոսելով Սփոփող Միության մասին, Նախագահ Սմիթը բացատրել է. «[Տերը] նրանց է տվել այդ հիանալի կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխերի եպիսկոպոսների ղեկավարության ներքո . . . , հոգ տանելով մեր մարդկանց հոգևոր և ֆիզիկական շահերի մասին» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ 4–5]: . . .

Մենք սովոր չենք կանանց մասին խոսել, որպես Եկեղեցու իրենց կոչումներում քահանայության իշխանություն ունեցողների, սակայն ուրիշ ի՞նչ իշխանություն կարող է լինել: Երբ կինը՝ երիտասարդ, թե ծեր, ձեռնադրվում է քարոզելու ավետարանը՝ որպես լիաժամկետ միսիոներ, նրան տրվում է քահանայության իշխանություն՝ կատարելու քահանայության գործառույթ: Նույնը կարել է ասել, երբ կինը քահանայության բանալիներ կրողի ղեկավարման ներքո ի սպաս է դրվում ծառայելու որպես պաշտոնյա կամ ուսուցիչ Եկեղեցու որևէ կազմակերպությունում: Ցանակացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս գործադրում է քահանայության իշխանությունը» («Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2014, 50–51):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐՊԱՀՊԱՆՎԱԾ ԵՆ: